USDA Food and Nutrition Service
U.S. DEPARTMENT OF AGRICULTURE

Օգնության կարիք ունեք ամառային արձակուրդներին ձեր երեխաներին կերակրելու համար:

Ծանոթացեք նոր SUN Bucks ծրագրի հետ, որը կօգնի ձեզ:

SUN Bucks-ը նոր ծրագիր է, որն օգնում է ընտանիքներին դպրոցական տարիքի երեխաների համար սնունդ գնել ամառային արձակուրդների ընթացքում: Ընտանիքները $120 դոլար կստանան յուրաքանչյուր իրավահասու երեխայի համար ամառային արձակուրդների ընթացքում սնունդ գնելու համար: **SUN Bucks** ծրագրից օգտվող երեխաները կարող են մասնակցել նաև ամառային սննդի այլ ծրագրերին: **SUN Bucks** օգնություն ստանալը չի ազդի երեխաների կամ ընտանիքների ներգաղթյալ (immigration) կարգավիճակի վրա:

Ինչպես է SUN Bucks ծրագիրը գործում:

Կալիֆոռնիայի նահանգում, **SUN Bucks** դրամը կներբեռնվի EBT քարտերի վրա և կուղարկվի ընտանիքներին: Եթե այն ձեզ հասանելի լինի, **SUN Bucks** դրամով դուք կարող եք գնել միրգ, բանջարեղեն, միս, ամբողջական հացահատիկ (whole grains) և կաթնամթերք նպարեղենի խանութներից, գյուղատնտեսական շուկաներից և այն բոլոր վաճառատներից, որոնք ընդունում են **CalFresh**, **CalWORKS** կամ **Medi-Cal** EBT քարտեր: **SUN Bucks**-ը շատ հարմարավետ ձև է, որը կօգնի ձեր երեխաներին բարգավաճել:

Հասանելի է արդո՞ք SUN Bucks ծրագիրը իմ երեխաների համար:

Ձեր երեխայի համար հասանելի է ծրագիրը, եթե.

- Ձեր ընտանիքը ստանում է **CalFresh**, **CalWORKS** կամ **Medi-Cal** ԿԱՄ
- Ձեր երեխան հաճախում է Ազգային դպրոցական ճաշ կամ Դպրոցական նախաճաշի ծրագիր հատկացնող դպրոց, և ձեր ընտանիքի եկամուտը համապատասխանում է անվճար կամ զեղչված գնով սնունդ գնելու չափանիշներին:

Ինչպե՞ս արձանագրել երեխաներին SUN Bucks ծրագրից օգտվելու համար:

Ընտանիքներից շատերն իրենք՝ բաբերաբար կստանան **SUN Bucks**, եթե դուք արդեն օգտվում եք այլ ծրագրերից, բայց որոշ ընտանիքներ պետք է դիմումնագիր լրացնեն:

Եթե ձեր ընտանիքն արդեն ստանում է **CalFresh**, **CalWORKS** կամ **Medi-Cal**, ձեր երեխան ինքնաբերաբար կմասնակցի **SUN Bucks** ծրագիրն: Ձեզ հարկավոր չէ դիմումնագիր լրացնել: Դուք փոստով քարտ կստանաք: Սպասեք մինչև, որ այն ստանաք:

Եթե դուք ինքնաբերաբար արձանագրված չէք և կարծում եք, որ ձեր երեխաներին հասանելի է այս ծրագիրը, դուք կարող եք լրացնել ԲՌՄՇ-ի Սննդի բաժնի անվճար կամ զեղչված գնով սննդի դիմումնագիր: Թղթե դիմումնագիր ստանալու համար, զանգահարել 818-729-4539 հեռախոսահամարին կամ դիմել առցանց. **www.SchoolCafe.com**

Ստուգելու համար, թե արդոք արդեն լրացրել եք **SUN Bucks**-ի դիմումնագիրը, դիմել Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի Սննդի ծառայությունների բաժնին 818-729-4539 հեռախոսահամարով: Դիմել առցանց. ***www.SchoolCafe.com***

USDA-ը հավասար հնարավորություններ հատկացնող է, գործատու և վարկատու: ● Հունվար 2024 ● Հավելյալ տեղեկությունների համար, հյուրընկալել. www.fns.usda.gov/summer

SUN Bucks-ը հնարավոր է դարձել ԱՄՆ-ի գյուղատնտեսական բաժնի, Սննդի և սնուցման ծառայությունների ֆինանսավորման կողմից: USDA | SUN SUMMER NUTRITION PROGRAMS FOR KIDS